ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ. Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, 256 էջ:*

Հայագիտությունը հարստացնող կարևոր աշխատությունների թիվն ավելացավ ևս մեկով: Ընթերցողի սեղանին է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմագիտության դոկտոր Գևորգ Ստեփանյանի «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին» խորագրով աշխատությունը: Այն լույս է տեսել պատմության ինստիտուտի «Մեսրոպ Արք. Աշճեան» մատենաշարով (սույն մատենաշարի 57-րդ - ձեռնարկն է):

Աշխատությունը բաղկացած է Ներածությունից, երկու գլխից, Վերջաբանից (հայերեն և ռուսերեն), յոթ հավելվածից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, համառոտագրությունների ցանկից (անձնանուններ, տեղանուններ):

Ներածության մեջ հեղինակը նշում է, որ Բաքվի նահանգի հայության պատմությունը դարեր շարունակ գոյատևած մի մեծ ու ինքնատիպ հայաշխարհի ժողովրդագրության, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի բազմազան հիմնահարցերի ամբողջական հանրագումարն է: Եվ սույն աշխատությունն իր ամբողջության մեջ ևս մեկ հիմնավոր ու լավագույն փաստարկ է, որ Արևելյան Այսրկովկասում՝ Կուրից Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում, հայերը բնակվել են վաղ ժամանակներից: XIX դ. կեսերին հայությունն իր ստվարաթիվ զանգվածներով ներկա էր վերոնշյալ երկրամասի նախալեռնային և լեռնային շրջանների ավելի քան 100 բնակավայրերում՝ սկսած Շամախիից մինչև երկրամասի հյուսիս-արևմուտքում գտնվող Զաքաթալա քաղաքը: Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ հայերը մասնակցել են այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-մշակութային և կրթամշակութային կյանքին ու ստեղծել հարուստ, նշանակալից պատմություն:

Առաջին գլխում («Արևելյան Այսրկովկասի հայությունը հնագույն ժամանակներից մինչև Բաքվի նահանգի կազմավորումը») ուշագրավ դիտարկումներով, փաստառատ նյութերով տրված է հայության ներկայությունը վերոնշյալ տարածաշրջանում՝ պատմության վաղ ժամանակներից սկսած: Մեջբերված պատմական բազմաթիվ ու բազմազան հիշատակություններն աներկբա վկայում են, որ Կուր գետով Մեծ Հայքին սահմանակից բուն Աղվանքի տարածքում, վաղ ժամանակներից սկսած, բնակություն է հաստատել ոչ միայն աղվանական, այլև հայկական էթնիկական որոշակի տարր՝ էական մասնակցություն ունենալով երկրամասի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումներին:

Աշխատության հեղինակը մեծավաստակ Հր. Աճառյանի շուրթերով շեշտում է, որ «Աղվանից երկրին մեջ գտնվեին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպես ուժեղ էին և այնպես հաստատուն կերպով տեղավորված երկրին մեջ, որ ոչ թե միայն իրենց ինքնուրույնությունը կորցրած չէին, այլև ընդհակառակը, զանազան հաջող հանգամանքներու պատճառավ... ազդեր էին երկրի վրա» (էջ 20):

Մենագրության էջերում փուլ առ փուլ գծագրվում են հայ բնակչության ազգագրական ընդհանուր տեղաշարժը, նրա քաղաքական և մշակութային գործունեության համապատկերը, որից պարզ է դառնում հետևյալը: Կուրի ձախափնյակի էթնոմշակութային պատկերում դեռևս - պարսիկների, ապա արաբական նվաճումների շրջանում՝ VII–VIII դարերում սկսված մշակութային, քաղաքական և էթնիկական փոփոխություններն ավելի մեծ ու ավերիչ բնույթ ստացան թյուրքալեզու քոչվոր ցեղերի ասպատակություն-

ների և տիրապետության ժամանակաշրջանում:

Հանրագումարելով այս ամենը՝ հեղինակը խտացված բնորոշում է, որ նստակյաց հողագործությունը շատ վայրերում տեղի տվեց քոչվորների անասնապահական տնտեսությանը, ինչն անվերականգնելի հարված էր երկրամասի քաղաքակրթական արժեքներին: Վաչկատունի և նստակյացի սույն հակադրությունն ընդունելի է որպես հիմք՝ հայի և թուրքի միջև մշտապես առկա անհանդուրժողականության ու լարվածության հարատև ընթացքի համար:

Մահմեդականացման ալիքը ծանր ավերներ գործեց Շաքի-Շիրվան գոտում նաև հետագա դարերում: Արդեն XVIII դ. սկզբներին էականորեն փոխվել էր երկրամասի ժողովրդագրական պատկերը, և այս տարածաշրջանում իրենց լեզուն ու էթնիկական դիմագիծը պահպանել էր բուն աղվանական էթնիկական միավորների մի մասը (լեզգիները, քրիստոնեություն դավանող ուդիները): Եվ լոկ հայ բնակչության շրջանում էր անխաթար պահպանվել ազգային մշակույթն ու լեզուն: Սակայն հետագա երկու հարյուրամյակները ևս երկրամասի քրիստոնյա ազգաբնակչության համար մեծագույն փորձությունների, էթնիկական ինքնությունը պահպանելու երկարատև և համառ պայքարի ժամանակաշրջան դարձան:

Երկրորդ գլխում («Բաքվի նահանգի հայության տեղաբաշխումը, բնակավայրերի տեղագրությունն ու շարժընթացը XIX դարի երկրորդ կեսին») գիտական ճշգրիտ փաստագրությամբ և մանավանդ սկզբնաղբյուրների ու աղբյուրների համակողմանի քննությամբ ներկայացված են Շամախի, Գյոքչայի, Բաքվի, Ղուբայի, Ջավաթի և Լենքորանի հայկական բնակավայրերի տեղագրությունը, աշխարհագրական դիրքը, բնակչությանը բնորոշ զբաղմունքները, բնակչության թվի և էթնոդավանական կազմի ընդհանուր պատկերը: Վերոնշյալից ակներև է դառնում, որ Բաքվի նահանգում ամենախիտ բնակեցված են եղել Լենքորանի և Ղուբայի հարթավայրերը, իսկ ամենանոսրը՝ Ջավաթի գավառը: Իսկ ըստ տեղաբաշխվածության, հայերը հիմնականում կենտրոնացած էին Բաքու քաղաքում, Գյոքչայի, Շամախիի, մասամբ նաև՝ Ղուբայի գավառներում, թաթերը՝ Բաքվի, Ղուբայի, Շամախու և մասամբ՝ Լենքորանի գավառներում, ռուսները՝ Շամախիի, Բաքվի, մասամբ՝ Լենքորանի, Ջավաթի, Ղուբայի և Գյոքչայի գավառներում, թալիշները՝ նահանգի հարավային մասում (Լենքորանի գավառ), հրեաները՝ Ղուբայի, Շամախիի, Բաքվի, Գյոքչայի, մասամբ՝ Լենքորանի գավառներում, վրացիները կենտրոնացած էին Բաքու քաղաքում, մասամբ՝ Ջավաթի, Գյոքչայի, Ղուբայի, Շամախիի և Լենքորանի գավառներում: Իսկ լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդները կենտրոնացած էին նահանգի հիմնականում հյուսիսային հատվածում՝ Ղուբայի գավառում, մասամբ նաև՝ Գյոքչայի, Բաքվի և Ջավաթի գավառներում: Նշված ժողովուրդներից բացի՝ նահանգում բնակվել են նաև փոքրաթիվ էթնիկական խմբեր՝ օսեր, գնչուներ, ինգուշներ, չեչեններ, արաբներ, չերքեզներ, քրդեր, հույներ և այլն:

Ըստ աշխատության հեղինակի՝ Բաքվի նահանգի ժողովրդագրական ընդհանուր հիմնահարցերի ուսումնասիրության տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում լեզգիական խմբի լեզուներով խոսող պատմական Աղվանքի բնիկ ժողովուրդների անմիջական հետնորդները՝ լեզգիները, ուդիները, աղուլները, հափութլիները, ջեկերը, բուդուղները, խինալուղները, կրիզները, ծախուրները, թաբասարանները և ռութուլները (էջ 161):

1897 թ. մարդահամարի տվյալներով, XIX դարավերջին Բաքվի նահանգի էթնովիճակագրական պատկերում ամենահոծ զանգվածը եղել են թուրք-թաթարները, քանզի ռուսական պետական վիճակագրությունը նրանց անվան դիմաց հանիրավի նշել է նաև թուրքական լեզվաընտանիքի տարբեր խմբերի մեջ մտնող մահմեդական այլ հանրույթներ՝ ղրղզներ, չուվաշներ, բաշկիրներ, կումիկներ, թուրքմեններ, թյուրքեր և այլն:

Եթե ընդհանրացնելու լինենք Գ. Ստեփանյանի աշխատության արժանիքները, ապա դրանցից ամենակարևորն այն է, որ հիմնավորապես ջախջախիչ հակահարված է տալիս սույն երկրամասն ադրբեջանապատկան համարելու և նրա հինավուրց ողջ պատմությունն ու մշակույթը յուրացնելու Ադրբեջանի պաշտոնական պատմագրության փորձերին և նկրտումներին:

Աշխատության գիտական ոճը, բանավիճելու հմուտ արվեստը վկայում են հեղի-

նակի անհատականության մասին: Այն շահեկանորեն տարբերվում է համանման այլ հետազոտություններից ժողովրդագրության ոլորտին առնչվող գիտական բազմապիսի տվյալների աննախադեպ ծավալով և անտիպ նյութերը շրջանառության մեջ դնելով:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ